ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի աճուրդի կազմակերպիչը հայտարարում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի բաց դասական աճուրդ:

Լոտ 1 – «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան փողոց 114/4 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0133-0013 կադաստրային ծածկագրով 0,05731 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ առևտրի սրահ կառուցելու նպատակով:

Հարևանությամբ առկա են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 699 755,10 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 349 877,55 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 34 987,755 ՀՀ դրամ:

Լոտ 2 – «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շվեյցարական թաղամաս 162 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0191-0028 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ առևտրի սրահ կառուցելու նպատակով:

Հարևանությամբ առկա են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 488 400 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 244 200 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 24 420ՀՀ դրամ:

Լոտ 3 – «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց 115 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0492-0003 կադաստրային ծածկագրով 0,02592 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ բնակելու տուն կառուցելու նպատակով:

Հարևանությամբ առկա են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 748 440 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 374 220 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 37 422 ՀՀ դրամ:

Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 207 սենյակ):

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ 2024 թ. նոյեմբերի 13-ին:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են անձնագիր և աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր 10 000 ՀՀ դրամի չափով՝ վճարված Սպիտակի համայնքապետարանի 900245161410 հաշվեհամարին:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2024թ. նոյեմբերի 13-ը:

Աճուրդը կայանալու է 2024թ. նոյեմբերի 18-ին ժամը 11.00-ին, Սպիտակի համայնքապետարանում (Շահումյան 7, 3-րդ հարկ, 310 սենյակ):

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: